ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-24-10/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 26.03.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և «Բեսթ Մոթորս» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ս. Գյուլասարյանի, ով գործում է «Բեսթ Մոթորս» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից՝ այսուհետև՝ «Կատարող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 01.02.2024թ. կնքված № ԳՀԾՁԲ-24-10/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և N 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն N1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է 8,000,000 (ութ միլիոն) ՀՀ դրամ, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան 13.12.2024թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ծառայությունների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Բեսթ Մոթորս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 15/14
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	«ՀայԷկոնոմԲանկ» ՓԲԸ, Ավան մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163718006618
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01021205
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ս. ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-24-10/1-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդ՝	Չափման միավորը	Քանակը	Ընդամենը առավելագույն գին (ՀՀ դրամ)	Ծառայության մատուցման ժամկետը
1	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	50531220/501	դրամ	1	8 000 000	1-ինից 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 30.11.2024թ.

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-24-10/1-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի							
Չ/հ	CPV կոդը	անվանումը	ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	վճարումը նախատեսվում է իրականացնել 2024թ., համապատասխան եռամսյակների, ընդ որում՝			
				առաջին եռամսյակ	երկրորդ եռամսյակ	երրորդ եռամսյակ	չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 13.12.2024թ.
1	50531220/501	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	8 000 000	1 000 000	4 000 000	7 000 000	8 000 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲԲՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Բեսթ Մոթորս» ՍՊԸ տնօրեն

Ս. ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆ